

**Մարզպետարանի մասին քաղաքացիների դիմումների,**

**բողոքների 2015թ.-ի ամփոփագիր**

2015թ-ի ընթացքում ստացվել է 1572 դիմում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել 1283 քաղաքացի: Դրական պատասխան է ստացել 1236-ը, մերժվել՝ 36-ը, ընթացքի մեջ է 11 դիմում: /Դրամական օգնության դիմումները մերժվել են հիմնականում կրկնակի լինելու կամ ընթացիկ եռամսյակում օգնություն ստացած լինելու հիմքով/:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 23 քաղաքացի, որից 11-ի խնդրանքը բավարարվել է, 10-ինը՝ մերժվել, 2 դիմում ընթացքի մեջ է: /Բնակարանային պահանջի դիմումները մերժվել են մարզպետարանի իրավասությունից դուրս լինելու պատճառով/:

գ/ Առողջապահական բնույթի 119 դիմումից դրական պատասխան է ստացել 111-ը, մերժվել է՝ 4-ը, 4 դիմում ընթացքի մեջ է: /Առողջապահական հարցերով դիմած քաղաքացիները մերժվել են պետ-պատվերի և առողջարանային ուղեգրերի սահմանափակ լինելու պատճառով/:

դ/ Աշխատանքի հարցերով դիմած 32 քաղաքացիներից 19-ի պահանջին դրական ընթացք է տրվել, 10 դիմում մերժվել է, 3 դիմում ընթացքի մեջ է /դիմումները մերժվել են աշխատատեղ չլինելու պատճառով/:

ե/ Գյուղատնտեսական հարցերով դիմած 19 քաղաքացիներից 14-ին տրվել է դրական պատասխան, 5 դիմում ընթացքի մեջ է:

զ/ Կրթության և մանկական հիմնարկներին առնչվող հարցերով դիմել են 23 քաղաքացի և բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

է/ հողաշինության հարցերով դիմած 25 քաղաքացիներից 22-ը ստացել են դրական պատասխան, 3 դիմում ընթացքի մեջ է:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել են 34 քաղաքացի և ստացել դրական պատասխան:

թ/ Այլ բնույթի 14 դիմում է հաշվառման վերցված, որին տրվել է դրական պատասխան:

ժ/ Սեփականաշնորհման բնույթի դիմումներ ներկայացրած քաղաքացիներին առաջարկվել է դիմել դատարան:

Փ. Ղազարյան

մարզպետարանի աշխատակազմի

քարտուղարության ընդհանուր բաժնի պետ